ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մարտի 2015թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 270-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի ընդհանուր համատեղ սեփականությունը համարվող Նորքի 9-րդ միկրոշրջանի հ.2 շենքի հ.9՝ 83.98 քմ ընդհանուր մակերեսով բնակարանի իր բաժնեմասը (1/5) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Ռաֆայել Սահակյանին, Իրինա Քոլոզյանին, Լիանա Շահբազյանին և Վարազդատ Սահակյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ռաֆայել Սահակյանը, Իրինա Քոլոզյանը, Լիանա Շահբազյանը և Վարազդատ Սահակյանը դիմել են Երևանի քաղաքապետարան՝ Նորքի 9-րդ միկրոշրջանի հ. 2 շենքի հ. 9՝ 83.98 քմ ընդհանուր մակերեսով բնակարանի Երևան համայնքի սեփականություն հանդիսացող բաժնեմասը իրենց անվամբ մասնավորեցնելու խնդրանքով:

Նորքի 9-րդ միկրոշրջանի հ.2 (Վիլնյուսի 37) շենքի հ.9՝ 83.98 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է Ռաֆայել Սահակյանին, Իրինա Քոլոզյանին, Լիանա Շահբազյանին, Վարազդատ Սահակյանին և Երևան համայնքին (հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.03022015-01-0045 վկայական):

Խորհրդային շրջգործկոմի 1994 թվականի սեպտեմբերի 25-ի հ.10/66 որոշմամբ՝ Նորքի 9-րդ միկրոշրջանի հ.2 շենքի հ.9՝ 83.98 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով տրամադրվել է Ռաֆայել Սահակյանին, Իրինա Քոլոզյանին, Լիանա Շահբազյանին, Հրանուշ Պետրոսյանին և Վարազդատ Սահակյանին: Հրանուշ Պետրոսյանը 2004 թվականի դեկտեմբերի 12-ին մահացել է (հիմք 13.12.2004 թ. տրված հ.003303 մահվան վկայական):

Քաղաքացի Հրանուշ Հովակիմի Պետրոսյանը հանդիսանում է Ռաֆայել Սահակյանի հորեղբոր՝ Անդրանիկ Սահակյանի կինը: Հորեղբոր մահից հետո Հրանուշ Պետրոսյանը փաստացի բնակվել է Ռաֆայել Սահակյանի ընտանիքի հետ, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռաֆայել Սահակյանը գործող օրենսդրության համաձայն չի համարվել Հրանուշ Պետրոսյանի ժառանգը, ապա վերջինիս մահից հետո հնարավոր չի եղել ձեևակերպել Ռաֆայել Սահակյանի ժառանգության իրավունքը քննարկվող բնակարանի Հրանուշ Պետրոսյանին պատկանող բաժնեմասի նկատմամբ:

Նկատի ունենալով, որ Հրանուշ Պետրոսյանը ժառանգներ չի ունեցել, նշված բնակարանի բաժնեմասը ճանաչվել է անժառանգ գույք և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1224-րդ հոդվածով սահմանված դրույթների համաձայն՝ բաժնեմասի նկատմամբ ձևակերպվել է Երևան համայնքի ժառանգության իրավունքը (25.12.2014թ. տրված անժառանգ գույքի նկատմամբ ժառանգության իրավունքի հ.2233 վկայագիր), որից ծագող իրավունքը ստացել է պետական գրանցում:

Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ.270-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ.270-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի ընդհանուր համատեղ սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի ընդհանուր համատեղ սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ